

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2025Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	6
3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ.....	9
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ.....	13
5. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ռուս-ուկրաինական և այլ հակամարտությունների, մատակարարման շղթաների խաթարման և այլ պատճառներով արձանագրված բացասական զարգացումների ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա զգալիորեն թուլացել է, սակայն ամբողջությամբ չի վերացել:

ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, բացառությամբ ԱՄՆ-ի, 2025թ. ինն ամիսների ընթացքում տնտեսական աճի տեմպերը դանդաղել են: Եվրագոտում տնտեսական աճն ընթացիկ տարվա ինն ամիսներին կազմել է շուրջ 1.5%: Չինաստանում գրանցվել է միջինում 5.1% աճ, իսկ ՌԴ-ում հունվար-սեպտեմբեր ամիսներին տնտեսական աճը կազմել է միջինում 1%:

Հայաստանի Հանրապետությունում, բացի արտաքին գործոններից, տնտեսական աճի դանդաղմանը էապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ ռուս-ուկրաինական հակամարտության արտաժին դրական ազդեցությունը գնալով չեզոքանում է: Թերևս նաև դա է պատճառը, որ 2026թ. պետական բյուջեի նախագծով կառավարությունը սպասում է, որ 2025-ի տարեկան տնտեսական աճի տեմպը կլինի մոտավորապես 5.2%, չնայած ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից օրերս հրապարակված նախնական տվյալների համաձայն՝ 2025 թվականի ինն ամիսներին արձանագրվել է զգալիորեն ավելի բարձր՝ 6.0%, տնտեսական աճ:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2025թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 7.6%՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների և շինարարության աճերով: Առևտրի և գյուղատնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին էապես ավելի փոքր են: Իսկ արդյունաբերության ոլորտի նպաստումը բացասական է, քանի որ ոլորտում հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է 5.7% անկում:

Արդյունաբերությունում գրանցված 5.7% անկումը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության 10.2% նվազմամբ. այս ենթաոլորտի նպաստումը արդյունաբերության ընդհանուր անկմանը կազմել է 7.2 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության նվազումը պայմանավորված է եղել «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղի 58.0%-ով նվազմամբ, ինչը մշակող արդյունաբերության անկմանը նպաստել է 14.2 տոկոսային կետով: Արդյունաբերության անկմանը նպաստել է նաև ոսկերչական արտադրատեսակների արտադրության, խմիչքի արտադրության և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության նվազումները:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը 2025թ. հունվար-սեպտեմբերին աճել է 6.1%-ով, ինչը

հիմնականում պայմանավորված է բուսաբուծության աճով, որը ոլորտի աճին նպաստել է 5.1 տոկոսային կետով:

Շինարարության ոլորտում գրանցվել է 20.7% աճ, որը հիմնականում պայմանավորված է եղել կազմակերպությունների (8.8 տոկոսային կետով), պետական բյուջեի (7.3 տոկոսային կետով) և բնակչության (3.5 տոկոսային կետով) միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով:

Ծառայություններն աճել են 9.9%-ով՝ հիմնականում պայմանավորված «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» (4.1 տոկոսային կետով) և «տեղեկատվություն և կապ» (3.7 տոկոսային կետով) ենթաճյուղերի աճերով: «Տրանսպորտ» ենթաճյուղի նվազումը շարունակել է -0.3 տոկոսային կետով բացասաբար ազդել ոլորտի աճի վրա:

Առևտրի ոլորտի աճն էապես դանդաղել է: Այսպես, եթե նախորդ տարվա ինն ամիսների արդյունքներով աճը կազմում էր 19.5%, ընթացիկ տարվա նույն ժամանակահատվածում այն ընդամենը 3.5% է:

Հունվար-սեպտեմբերին *սպառումն* իրական արտահայտությամբ աճել է շուրջ 9.1%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնավոր հատվածի սպառման աճով:

Կապիտալ ներդրումների հունվար-սեպտեմբերի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է շուրջ 27.8%՝ պայմանավորված հիմնականում մասնավոր ներդրումների աճով:

2025թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է արտաքին ապրանքաշրջանառության անկում, ինչը հիմնականում պայմանավորված է վերաարտահանման ծավալների կտրուկ նվազմամբ: Նշված ժամանակահատվածում այն կազմել է 14,564 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 39.3%-ով պակաս:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2025 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վատթարացել է՝ 19.2%-ով և կազմել 3,238 մլն ԱՄՆ դոլար՝ պայմանավորված ներմուծման համեմատ արտահանման ավելի մեծ անկմամբ:

Դոլարային արտահայտությամբ արձանագրվել է արտահանման և ներմուծման կտրուկ անկում. արտահանումը նվազել է 46.8%-ով՝ կազմելով 5,663 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 33.4%-ով՝ կազմելով 8,901 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման նվազմանն ամենամեծ՝ 49.3 տոկոսային կետի նպաստումն ունեցել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը: Ներմուծման անկումը ևս հիմնականում

պայմանավորված է այդ նույն ապրանքախմբի ներմուծման շեշտակի՝ 77.5%-ով նվազմամբ:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2025թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.3%-ով և կազմել 295,042 դրամ: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4.8%-ով՝ կազմելով 227,888 դրամ, իսկ ոչ պետականում՝ 5.1%-ով և կազմել է 320,901 դրամ:

2025թ. ինն ամիսների ընթացքում գնաճն արագացել է՝ մոտենալով ԿԲ թիրախային միջակայքի վերին շեմին, որի պայմաններում ԿԲ-ն դադարել է մեղմացնել դրամավարկային պայմանները՝ տարեսկզբին վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.25 տոկոսային կետով նվազումից հետո այն պահպանելով 6.75% մակարդակում: 12-ամսյա գնաճը սեպտեմբերին կազմել է 3.7%, միջին գնաճը՝ 3.3%:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց փոխանցումների զուտ ներհոսքը 2025թ. ինն ամիսներին աճել է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով փոխանցումների զուտ ներհոսքը 2025թ. ինն ամիսների դրությամբ կազմել է 1,025 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 15.5%-ով ավելի:

Ինչպես նշվեց, 2025թ. ինն ամիսներին արձանագրվել է բավական բարձր տնտեսական աճ: Այնուամենայնիվ, այն բավական խոցելի է ներառականության տեսանկյունից: Մասնավորապես, իրական ՀՆԱ-ի 6% աճի պայմաններում իրական աշխատավարձն աճել է ընդամենը 1.9%-ով: Չի հաջողվում բարձրացնել բնակչության կենսամակարդակը. համաձայն պաշտոնական վիճակագրության՝ 2024 թվականին աղքատության մակարդակն ըստ աղքատության միջին գծի կազմել է 21.7%: Մտահոգիչ է նաև սպառողական և հիպոթեքային վարկերի ծավալների զգալի աճը. դրանք 2025-ի սեպտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են համապատասխանաբար 31.1%-ով և 30.6%-ով, մինչդեռ բնակչության եկամուտների (ներառյալ աշխատավարձերը, դրամական փոխանցումները և այլն) աճն անհամեմատ ավելի ցածր է:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2025 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,126 մլրդ դրամ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Ինն ամիսների փաստացի	Ինն ամիսների պլան	Ինն ամիսների ճշտված պլան	Ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,860.4	2,076.8	2,091.8	2,125.5	101.6
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,767.2	1,999.4	2,005.4	2,012.8	100.4
Պաշտոնական դրամաշնորհներ	13.1	7.8	8.2	5.0	61.6
Այլ եկամուտներ	80.1	69.6	78.1	107.7	137.8

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են շուրջ 2,012.8 մլրդ դրամ՝ իննամսյա ծրագրային ցուցանիշի 100.4%-ը:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2024թ. ինն ամիսների փաստացի (մլրդ դրամ)	2025թ. ինն ամիսների փաստացի (մլրդ դրամ)	2025թ. ինն ամիսները 2024թ. ինն ամիսների նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,767.2	2,012.8	113.9
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,710.1	1,946.9	113.8
ԱԱՀ	525.8	652.6	124.1
Ակցիզային հարկ	95.9	109.0	113.7
Շահութահարկ	290.4	344.0	118.4
Մաքսատուրք	55.6	54.9	98.8
Եկամտային հարկ	486.6	535.7	110.1
Շրջանառության հարկ	44.0	56.4	128.2
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	76.7	86.9	113.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	75.4	49.4	65.5
Այլ հարկեր	59.7	57.9	97.1
2. Պետական տուրք	57.1	66.0	115.4

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության աճին ամենամեծ նպաստումն ունեցող եկամտատեսակներն են՝ *ԱԱՀ-ն* (նպաստումը՝ 7.2 տոկոսային կետ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը՝ 24.1%), *շահութահարկը* (նպաստումը՝ 3.0 տոկոսային կետ, աճը՝ 18.4%) և *եկամտային հարկը* (նպաստումը՝ 2.8 տոկոսային կետ, աճը՝ 10.1%):

2025 թվականի ինն ամիսներին պետական բյուջեի փաստացի եկամուտներից 66 մլրդ դրամը կազմել են *պետական տուրքերը*: Դրանց մեծությունն ավելի քան 15%-ով գերազանցում է իննամսյա ծրագրային ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի զգալի աճով:

Պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը թերակատարվել են:

2025 թվականի ինն ամիսներին ստացվել են շուրջ 5.0 մլրդ դրամ կամ ծրագրված մուտքերի 60.8%-ը: Թերակատարումը պայմանավորված է նպատակային դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Նպատակային ծրագրերից 6-ի գծով դրամաշնորհներ չեն ստացվել, իսկ 7-ի գծով ստացվել են մասնակիորեն: Ի դեպ, պաշտոնական դրամաշնորհների փաստացի մեծությունը 61.8%-ով կամ 8.1 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա ինն ամիսների ցուցանիշից:

ՀՀ պետական բյուջեի *այլ եկամուտները* 2025 թվականի ինն ամիսներին կազմել են 107.7 մլրդ դրամ՝ 37.8%-ով գերազանցելով իննամսյա ծրագրային ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացված շահաբաժինների, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների, իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի և օրենքով ու իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ: Նշված եկամուտների աճով է պայմանավորված նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների 34.5%-ով (27.6 մլրդ դրամով) աճը:

Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 18.1 մլրդ դրամի շահաբաժիններ: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է «Զանգեզուրի պղծնամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ում պետական մասնակցության դիմաց համապատասխանաբար 11.2 մլրդ դրամ և 3.6 մլրդ դրամ շահաբաժինների ստացմամբ:

Հատկանշական է, որ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացված մուտքերն էականորեն՝ 28.4%-ով կամ 4.7 մլրդ դրամով, գերազանցել են ծրագրային ցուցանիշին, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից գանձվող մուտքերով:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են 29.8 մլրդ դրամ տոկոսավճարներ, որոնք 33.1%-ով (7.4 մլրդ դրամով) գերազանցել են իննամսյա ծրագրային ցուցանիշը և 9.4%-ով (2.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Այս մեծության զգալի աճն ունի նաև բացասական կողմ, քանի որ բյուջեի ազատ միջոցների առկայությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ, ի տարբերություն պետական բյուջեի եկամուտների, ծախսերը թերակատարվել են: Այսինքն՝ հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության վրա ունեցել է էական զսպող ազդեցություն, քանի որ, մի կողմից՝ տնտեսությունից հավաքագրվել են ծրագրային ցուցանիշին նույնիսկ մի փոքր գերազանցող եկամուտներ, մյուս կողմից՝ բյուջեի ծախսերը լրջորեն թերակատարվել են:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2025 թվականի ինն ամիսներին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,205 մլրդ դրամ: Դրանք ճշտված պլանի համեմատ թերակատարվել են 14.3%-ով կամ 366.6 մլրդ դրամով: Այս անգամ էլ (ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում) թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը: Մասնավորապես, ընդհանուր թերակատարման 55.3%-ը վերաբերում է ընթացիկ ծախսերին, 44.7%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնություններին (դրանք հիմնականում կապիտալ ծախսերն են): Ընթացիկ ծախսերի գծով թերակատարումը 10.3% է, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունների մասով թերակատարումը՝ 27.2% (կապիտալ ծախսերի մասով՝ 28.1%):

Պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 98.7%-ը կամ 2,176 մլրդ դրամը: Դրանց գծով իննամսյա ծրագիրը կատարվել է 87.5%-ով: Բյուջեի ծախսերի 1.3%-ը՝ 29.6 մլրդ դրամը, ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է իննամսյա ծրագրի 34.7%-ը:

2025-ի ինն ամիսներին ևս (ինչպես նախորդ տարվա նույն ժամանակահատվածում) ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են

ընթացիկ ծախսերի՝ տնտեսագիտական դասակարգմամբ առանձնացվող բոլոր բաղադրիչները:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,933.4	2,539.3	2,572.0	2,205.4	85.7
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	1,640.9	1,955.0	1,969.5	1,766.9	89.7
Աշխատանքի վարձատրություն	164.2	186.2	184.9	173.9	94.1
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	67.3	78.5	87.1	64.5	74.1
Տոկոսավճարներ	192.3	238.1	233.7	211.8	90.6
Սուբսիդիաներ	131.3	144.7	150.5	145.0	96.3
Դրամաշնորհներ	204.2	244.3	238.4	206.2	86.5
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	737.0	860.3	873.1	793.0	90.8
Այլ ծախսեր	144.7	202.7	201.7	172.5	85.5
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	292.5	584.4	602.6	438.6	72.8
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր (կապիտալ ծախսեր), այդ թվում՝	303.1	594.9	613.1	441.1	71.9
Շենքեր և շինություններ	277.9	552.9	563.8	419.9	74.5
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	21.9	28.9	37.7	17.7	46.9
Այլ հիմնական միջոցներ	3.2	13.1	11.5	3.5	30.2
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(10.6)	(10.5)	(10.5)	(2.5)	24.0

Կապիտալ ծախսերի¹ գծով կատարողականն ավանդաբար ցածր է. ճիշտ է, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տոկոսային արտահայտությամբ կատարողականը նույնիսկ աննշան բարելավվել է (70.9%-ից դարձել է 71.9%), սակայն **բացարձակ մեծությամբ թերակատարումը զգալիորեն խորացել է՝** 124.1 մլրդ դրամից դառնալով 172.0 մլրդ դրամ:

Կապիտալ ծախսերի գծով թերակատարումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ապահովում», «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրերի շրջանակներում իրականացված կապիտալ ծախսերի ցածր կատարողականով:

Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի (ներառյալ՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ) գծով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված էական թերակատարումն էլ ավելի է մեծացել՝ կազմելով 58.7% կամ 58.8 մլրդ դրամ: Ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերի գծով կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է 113.1 մլրդ դրամ կամ 22.1%: Ընդ որում, ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերի ցանկում ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերը չդիտարկելու դեպքում մնացած ծրագրերի գծով կատարողականն էապես ավելի ցածր է՝ ընդամենը 55.0%:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 2.5 մլրդ դրամի մուտքեր՝ ինն ամիսների ծրագրով նախատեսված 10.5 մլրդ դրամի և նախորդ տարվա ինն ամիսներին ստացված 10.6 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, հիշյալ 2.5 մլրդ դրամ մուտքերից 1.8 մլրդ դրամը ստացվել է պետական սեփականություն հանդիսացող հողերի վաճառքից:

Այս տարի ևս (ինչպես և անցյալ տարվա ինն ամիսներին) տոկոսային արտահայտությամբ կապիտալ ծախսերի թերակատարումն էապես՝ 2.7 անգամ, ավելի մեծ է, քան ընթացիկ ծախսերինը: Այսինքն՝ տնտեսության վրա ծախսերի թերակատարման բացասական ազդեցությունն իրականում շատ ավելի խոր է, քան կարող է թվալ առաջին հայացքից, քանի որ պետությունն առաջին հերթին հենց կապիտալ ծախսերով պետք է ավելացնի տնտեսական աճի պոտենցիալը:

2025 թվականի ինն ամիսներին ընդհանուր ծախսերի 14.3%-ով թերակատարումն առավելապես պայմանավորված է «պաշտպանություն», «սոցիալական պաշտպանություն» և «ընդհանուր բնույթի հանրային

¹ Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի տարբերությունը:

ծառայություններ» բաժինների գծով արձանագրված ցածր կատարողականով՝ համապատասխանաբար 3.3, 2.7 և 2.4 տոկոսային կետերով: Դրանց գծով թերակատարումը կազմել է համապատասխանաբար 15.7%, 9.8% և 12.0%:

3.1. Բյուջեի ծախսերը՝ ծրագրային դասակարգմամբ

2025 թվականի ինն ամիսներին նախատեսվել էր 171 բյուջետային ծրագրերի (կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում դրանց թիվը հասցվել է 174-ի) իրականացում 47 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Ինն ամիսներին փաստացի միջոցներ են օգտագործվել 169-ի գծով, ընդ որում՝ ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները վերաբաշխվել են: Ծրագրերի շրջանակներում ինն ամիսներին նախատեսված 911 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 3 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 834-ը կամ 91.5%-ը:

Այս տարվա ինն ամիսներին ևս պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված և ոչ մի մարմին զերծ չի մնացել իր պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով թերակատարումներից: Ընդ որում, դրանցից շատերի դեպքում թերակատարումը չափազանց մեծ է. մասնավորապես, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գծով ընդհանուր թերակատարումը 62.1% է, շրջակա միջավայրի նախարարության գծով՝ 32.9%, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գծով՝ 25.1%, էկոնոմիկայի նախարարության գծով՝ 24.3%:

2025 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերի 366.6 մլրդ դրամի թերակատարման զգալի մասն արձանագրվել է ՀՀ պաշտպանության (թերակատարումը՝ 81.8 մլրդ դրամ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (70.1 մլրդ դրամ), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (54.7 մլրդ դրամ) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (49.2 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Բացարձակ մեծությամբ ամենամեծ թերակատարումը՝ 81.8 մլրդ դրամ, արձանագրվել է պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի գծով: Տոկոսային արտահայտությամբ թերակատարումը կազմել է 15.0%: Այս ծրագրի գծով փաստացի կատարված 456.4 մլրդ դրամ ծախսերի 65.2%-ը՝ ավելի քան 297.5 մլրդ դրամը, ուղղվել է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավմանը, որը կատարվել է

91.1%-ով, իսկ 34.7%-ն օգտագործվել է ռազմական կարիքների բավարարման շրջանակներում, որի գծով ծախսերը կազմել են ընդամենը 158.6 մլրդ դրամ կամ պլանավորվածի 87.6%-ը:

Համեմատաբար բարձր կատարողական (90.2%) է արձանագրվել **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության** պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով, ինչը, թերևս, բնական է, քանի որ նախարարության ծրագրերի մեծ մասը (այդ թվում՝ «Կենսաթոշակային ապահովություն» ծրագիրը) պահանջում են ծախսերի լրիվ և ժամանակին իրականացում: Այնուամենայնիվ, արժե անդրադառնալ նախարարության իրականացրած միջոցառումներից մեկին՝ «Սոցիալական ապահովություն» ծրագրի «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրում» միջոցառմանը: Միջոցառման գծով փաստացի ծախսվել է շուրջ 11.8 մլրդ դրամ: **Կենսաթոշակը չբարձրացնելու մտահոգություններին գործող իշխանությունը մշտապես հակադարձում է կենսաթոշակից անկանխիկ կատարված ծախսերի դիմաց գումարի վերադարձի համակարգ ներդնելու շնորհիվ, իրենց որակմամբ այսպես կոչված՝ կենսաթոշակների անուղղակի բարձրացման հանգամանքով:** Բնականաբար, անուրանալի է անկանխիկ գործառնություններից վերադարձի ծրագրի դրական ներգործությունը, սակայն տեղին է այս միջոցառման գծով փաստացի ծախսերը համեմատել «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրի գծով փաստացի ծախսերի՝ 395.0 մլրդ դրամի հետ: **Արդյունքում ստացվում է, որ կենսաթոշակառուներին հետվճարի ձևով վերադարձված գումարը չի գերազանցում կենսաթոշակային ապահովության ծախսերի 3 տոկոսը:**

Հարկ է նշել, որ ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի կատարողականը շարունակում է մնալ խիստ ցածր (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. 2025թ. ինն ամիսներին իրականացված որոշ ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ

N	Ծրագիր	Պատասխանատու	2025թ. ինն ամիսների պլան	2025թ. ինն ամիսների ճշտված պլան	2025թ. ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
1.	Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	3,953.9	3,936.0	174.3	4.4
2.	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում		4,351.5	3,178.6	655.3	20.6
3.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության		23,466.8	17,772.6	7,797.7	43.9

	Էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր					
4.	Զբոսաշրջության զարգացման ծրագիր	Էկոնոմիկայի նախարարություն	6,366.2	6,366.2	1,054.3	16.6
5.	Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր		2,298.8	3,923.2	1,399.4	35.7
6.	Գյուղատնտեսության խթանման ծրագիր		8,778.8	6,851.3	4,402.2	64.3
7.	Ակադեմիական քաղաքի ստեղծում	ԿԳՄՍ նախարարություն	1,488.6	1,488.6	636.2	42.7
8.	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում		66,449.1	82,643.0	54,890.0	66.4
9.	Զրամատակարարման և ջրահեռացման բարելավում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	6,738.1	6,448.9	3,391.5	52.6
10.	Քաղաքային զարգացում		16,832.7	14,947.8	5,620.3	37.6
11.	Ճանապարհային ցանցի բարելավում		67,134.2	77,644.1	48,996.8	63.1
12.	Ոռոգման համակարգի առողջացում		19,318.6	18,434.5	12,428.4	67.4

Աղյուսակում ընդգրկված գրեթե բոլոր ծրագրերն արդեն մի քանի հաշվետու ժամանակահատված շարունակ ունեն ցածր կատարողական:

2025թ. ինն ամիսներին ԿԳՄՍ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի գծով ծախսերը թերակատարվել են 33.6%-ով կամ 27.8 մլրդ դրամով: Հաշվետվությունում նշված է, թե ընթացիկ տարվա ինն ամիսներին քանի հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնման, կառուցման, բարելավման աշխատանքներ են ընթացել, սակայն չի նշվում, թե հաշվետվությունը ներկայացնելու պահի դրությամբ ծրագրով քանի հաստատության գծով են աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել: Այդ մասին Ազգային ժողովում 2026 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ որպես արդեն իսկ պատրաստ դպրոցների քանակ հնչեցվեց 59 թիվը: Իսկ դա ավելի հիմնավոր է դարձնում մինչև գործող կառավարության գործունեության ավարտը պետական բյուջեի միջոցների շրջանակներում առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման թիրախի իրատեսականության վերաբերյալ թերահավատությունը:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ 2025 թվականի ինն ամիսներին

ընթացքում իրականացվել է 21 ծրագիր: Նշված ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսված 218.2 մլրդ դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 163.5 մլրդ դրամ: Ընդհանուր թերակատարումը 25.1% է: **Այս նախարարության ծրագրերից անգամ «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիրն է թերակատարվել՝ շուրջ 37%-ով՝ հիմնականում պայմանավորված պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի կատարողականով:**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացվող 10 ծրագրի համար ճշտված պլանով նախատեսվել է 58.4 մլրդ դրամի ծախսեր, որոնք թերակատարվել են 24.3%-ով կամ 14.2 մլրդ դրամով: Թերակատարվել են ՀՀ տնտեսության զարգացման առումով այնպիսի կարևորագույն նշանակություն ունեցող ծրագրեր, ինչպիսիք են՝ «Ներդրումների և արտահանման խթանում» և «Գյուղատնտեսության խթանում» ծրագրերը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատասխանատվությամբ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացված բոլոր 5 ծրագրերն էլ թերակատարվել են: Նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով փաստացի ծախսվել է ընդամենը 10.0 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 26.4 մլրդ դրամի փոխարեն կամ դրա ընդամենը 37.9%-ը: **Ի դեպ, նախորդ տարվա 9 ամիսներին «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում» ծրագրի կատարողականը 0% էր, իսկ այս տարի՝ 0-ական կատարողականը շատ աննշան է բարելավվել՝ նախատեսված 3.9 մլրդ դրամից փաստացի ծախսվել է ընդամենը 174.3 մլն դրամ կամ պլանավորվածի 4.4%-ը:**

ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատվությամբ 2025 թվականի ինն ամիսների ընթացքում իրականացված 12 ծրագրերից միայն 6-ի կատարողականն է 90%-ից բարձր: Ի դեպ, գործող կառավարության 2021-2026թթ. ծրագրով դեռևս 2023 թվականից պետք է ներդրվեր առողջության համապարփակ ապահովագրության համակարգը՝ փուլային տարբերակով, իսկ մինչև 2026թ. պետք է ավարտվեր այս համակարգի ամբողջական ներդրումը: **Սակայն առողջապահական համապարփակ ապահովագրության համակարգի մասով օրենսդրական փաթեթը մինչև այժմ ԱԺ-ի կողմից ամբողջությամբ չի ընդունվել: Ավելին, 2025-ի պետական բյուջեով այս ուղղությամբ նախատեսվել էին ընդամենը 2.8 մլրդ դրամ, որից 2.2 մլրդ դրամը՝ առաջին ինն ամիսներին: Սակայն նույնիսկ այդ փոքրիկ գումարն ընդհանրապես չի օգտագործվել: Գործող կառավարության ծրագրով նախատեսված է 50 բժշկական**

կազմակերպությունների արդիականացում, սակայն այս պահի դրությամբ աշխատանքները ավարտված են ընդամենը 14-ում:

Ամփոփելով բյուջեի ծախսերի վերլուծությունը՝ կարելի է փաստել, որ այս ոլորտում արձանագրված շոշափելի թերակատարումները շարունակում են վկայել պետական կառավարման ցածր արդյունավետության մասին:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2025 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 79.9 մլրդ դրամ պակասուրդով՝ ծրագրված 480.3 մլրդ դրամի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 73 մլրդ դրամի դիմաց: Իննամսյա ծրագրի համեմատ պակասուրդի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է ծախսերի ցածր կատարողականով, որը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների աճի: Բացի այդ, ցածր ցուցանիշ է արձանագրվել արտաքին աղբյուրներից ստացվող վարկերի գծով, որոնք կազմել են 34.7 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 40%-ը՝ հիմնականում պայմանավորված ծրագրերի կատարման աստիճանով:

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն ապահովվել է գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտքերի հաշվին, որոնք կազմել են 257.2 մլրդ դրամ և 23.9%-ով գերազանցել ծրագրային ցուցանիշը՝ պայմանավորված ապրիլ ամսին մեծ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումների հետ:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է -252.2 մլրդ դրամ՝ ծրագրված 162.1 մլրդ դրամի դիմաց, որը հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսված 193.7 մլրդ դրամ օգտագործման փոխարեն 232.3 մլրդ դրամ աճով:

2025թ. ինն ամիսներին պակասուրդային բյուջեի ձևավորման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է զսպող, ինչը հաշվետվությունում պատճառաբանվում է տնտեսության զարգացումների համեմատ հարկային եկամուտների առաջանցիկ աճով, «ինչպես նաև պետական բյուջեի ծախսերի իրականացման ժամանակային առանձնահատկություններով»: Մինչդեռ, ինչպես և նախորդ տարի, 2025թ. պետական բյուջեի ուղերձով նախատեսվում է, որ

հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա ունենալու է չեզոք ազդեցություն²:

Աղյուսակ 5. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	ինն ամիսների փաստացի	ինն ամիսների պլան	ինն ամիսների ճշտված պլան	ինն ամիսների փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	73.0	462.6	480.3	79.9	16.6
<u>Պակասուրդի ֆինանսավորումը՝</u>					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	162.5	369.3	369.7	5.0	1.4
1. Փոխառու զույր միջոցներ	236.6	207.7	207.7	257.2	123.9
2. Ֆինանսական զույր ակտիվներ	(74.2)	161.7	162.1	(252.2)	(155.6)
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	(89.4)	93.2	110.5	74.9	67.8
1. Փոխառու զույր միջոցներ	(74.3)	102.5	119.6	81.7	68.3
2. Ֆինանսական զույր ակտիվներ	(15.2)	-9.2	(9.1)	(6.8)	75.3

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,433.5 մլրդ դրամ կամ 14,195.9 մլն ԱՄՆ դոլար՝ 2024թ. տարեվերջի համեմատությամբ դրամային արտահայտությամբ աճելով 340.8 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 1,353.6 մլն ԱՄՆ դոլարով: Ե՛վ դրամային, և՛ դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի աճով՝ համապատասխանաբար 7%-ով և 10.8%-ով:

Հարկ է նշել, որ գործող իշխանության օրոք ՀՀ պետական պարտքը սրընթաց աճ է ունեցել: Այսպես, դոլարային արտահայտությամբ պետական պարտքի 30.09.2025թ. դրությամբ ցուցանիշը շուրջ 2.1 անգամ գերազանցում է 30.04.2018թ. ցուցանիշին:

Կառավարության պարտքը կազմել է 5,233.6 մլրդ դրամ կամ 13,673.6 մլն ԱՄՆ դոլար: Տարեսկզբի համեմատ այն աճել է 1,335.4 մլն ԱՄՆ դոլարով:

² ՀՀ կառավարության 2025 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 58, 88, 95, 103
<https://minfin.am/website/images/website/....docx>

Կենտրոնական բանկի պարտքը նույն ժամանակահատվածում աճել է 18.3 մլն ԱՄՆ դոլարով կամ 3.6%-ով՝ 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմելով 522.3 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ պետական պարտքի ծավալում կառավարության պարտքի տեսակարար կշիռը կազմել է 96.3%, իսկ կենտրոնական բանկի արտաքին պարտքինը՝ 3.7%:

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ 2024թ. տարեվերջի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքն աճել է 448.9 մլն ԱՄՆ դոլարով (7%-ով): Մասնավորապես՝ ՀՀ կառավարության արտաքին պարտքն աճել է 430.7 մլն ԱՄՆ դոլարով (7.2%-ով), իսկ ՀՀ ԿԲ արտաքին պարտքը՝ 18.3 մլն ԱՄՆ դոլարով (3.6%-ով): Ներքին պարտքի տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում աճել է՝ 49.7%-ից հասնելով 51.4%-ի: **Ինչպես բազմիցս նշվել է՝ ներքին պարտքը արտաքին պարտքի համեմատությամբ էապես ավելի «թանկ» պարտք է: Պատահական չէ, որ տարեցտարի անշեղորեն աճում են պետական պարտքի սպասարկման տոկոսավճարները.** դրանք 2017-ի ինն ամիսների 90.6 մլրդ դրամի համեմատ աճել են 133.9%-ով՝ 2025-ի ինն ամիսներին կազմելով 211.8 մլրդ դրամ:

Աղյուսակ 6. ՀՀ պետական պարտքը

	Առ 31.12.2024թ.	Առ 30.09.2025թ.	Փոփո- խու- թյուն, գումար	Փոփո- խու- թյուն, %	Տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքում, առ 30.09.2025թ. (%)
(մլրդ դրամ)					
ՀՀ պետական պարտք	5,092.7	5,433.5	340.8	6.7	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	4,892.8	5,233.6	340.7	7.0	96.3
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	2,359.6	2,442.3	82.7	3.5	44.9
- ՀՀ կառավարության ներքին պարտք	2,533.3	2,791.3	258.1	10.2	51.4
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	199.9	199.9	0.03	0.02	3.7
(մլն ԱՄՆ դոլար)					
ՀՀ պետական պարտք	12,842.2	14,195.9	1,353.6	10.5	100.0
ՀՀ կառավարության պարտք, այդ թվում՝	12,338.2	13,673.6	1,335.4	10.8	96.3
- ՀՀ կառավարության արտաքին պարտք	5,950.1	6,380.8	430.7	7.2	44.9
- ՀՀ կառավարության ներքին պարտք	6,388.1	7,292.8	904.7	14.2	51.4
ՀՀ կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	504.0	522.3	18.3	3.6	3.7

Պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է: Մասնավորապես, պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը 2025թ. սեպտեմբերին կազմել է 8.0%՝ նախորդ ամսվա

համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ՝ 1.1 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը սեպտեմբերին կազմել է 9.25%, որը օգոստոսի ցուցանիշից 0.4 տոկոսային կետով նվազել է, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազումը 0.7 տոկոսային կետ է:

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 7.3%: **Չնայած այն բանին, որ անցած մեկ տարում շուկայում տոկոսադրույքները նվազել են, ՀՀ կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքն այնքան է, որքան նախորդ տարվա սեպտեմբերի 30-ին:** Պատճառն այն է, որ անցած մեկ տարում ավելացել է ներքին և նվազել՝ արտաքին պարտքի տեսակարար կշիռը, իսկ ինչպես նշվել էր՝ ներքին պարտքի տոկոսադրույքն էապես ավելի բարձր է, քան արտաքինին: Մասնավորապես, 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արտաքին վարկերի և փոխառությունների գծով տոկոսադրույքը 3.3% է, իսկ պետական գանձապետական պարտատոմսերի գծով՝ 10.4%:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով.

2025թ. ինն ամիսներին արձանագրվել է բավական բարձր տնտեսական աճ, սակայն դրա կառուցվածքը բավական խնդրահարույց է: Աճին հիմնականում նպաստել են ծառայությունների և շինարարության ոլորտները, մինչդեռ արդյունաբերությունում անկում է՝ պայմանավորված մշակող արդյունաբերության զգալի անկմամբ: Արտաքին ապրանքաշրջանառության անկումը նույնպես զգալի է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 39.3%-ով պակաս: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2025 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վատթարացել է 19.2%-ով՝ պայմանավորված ներմուծման համեմատ արտահանման ավելի մեծ անկմամբ: Արտահանումը դուրաբային արտահայտությամբ նվազել է 46.8-ով, իսկ ներմուծումը՝ 33.4%-ով: Ավելին, ըստ էության տնտեսական աճը ներառական չէ: Իրական ՀՆԱ-ի 6% աճի պայմաններում իրական աշխատավարձն աճել է ընդամենը 1.9%-ով: Բարձր է մնում աղքատության մակարդակը: Սպառողական և հիպոթեքային վարկերի ծավալները զգալիորեն՝ համապատասխանաբար 31.1%-ով և 30.6%-ով, աճել են, մինչդեռ բնակչության եկամուտների աճն անհամեմատ ավելի ցածր է:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 2,126 մլրդ դրամ եկամուտ: Ի տարբերություն հարկային եկամուտների և պետական տուրքերի, որոնց գծով հաջողվել է կատարել պլանը, **պաշտոնական**

դրամաշնորհների մասով առկա է չափազանց մեծ թերակատարում՝ պայմանավորված նպատակային դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտներում զգալիորեն՝ 28.4%-ով աճել են իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացված մուտքերը՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ներքին գործերի նախարարության գանձումների աճով:

2025 թվականի ինն ամիսներին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,205 մլրդ դրամ: **Ճշտված պլանի համեմատ ծախսերի թերակատարումը 14.3% կամ 366.6 մլրդ դրամ է: Թերակատարվել են և՛ ընթացիկ, և՛ կապիտալ ծախսերը:**

Տոկոսային արտահայտությամբ կապիտալ ծախսերի թերակատարումն էապես՝ 2.7 անգամ, ավելի մեծ է, քան ընթացիկ ծախսերինը: Այսինքն՝ տնտեսության վրա ծախսերի թերակատարման բացասական ազդեցությունն իրականում շատ ավելի խոր է, քան կարող է թվալ առաջին հայացքից, քանի որ պետությունն առաջին հերթին հենց կապիտալ ծախսերով է ավելացնում տնտեսական աճի պոտենցիալը:

Կապիտալ ծախսերի գծով թերակատարումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ պաշտպանության ապահովում», «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» և «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրերի շրջանակներում իրականացված կապիտալ ծախսերի ցածր կատարողականով:

Պետական բյուջեի կատարման հաշվետվությունում ներկայացված բոլոր մարմիններում արձանագրվել են իրականացվող ծրագրերի գծով թերակատարումներ:

Բացարձակ մեծությամբ ամենամեծ թերակատարումը՝ 81.8 մլրդ դրամ, արձանագրվել է պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի գծով: Տոկոսային արտահայտությամբ թերակատարումը կազմել է 15.0%: Այս ծրագրի գծով փաստացի կատարված 456.4 մլրդ դրամ ծախսերի 65.2%-ը՝ ավելի քան 297.5 մլրդ դրամը, ուղղվել է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավմանը, որը կատարվել է 91.1%-ով, իսկ 34.7%-ն օգտագործվել է ռազմական կարիքների բավարարման շրջանակներում, որի գծով ծախսերը կազմել են ընդամենը 158.6 մլրդ դրամ կամ պլանավորվածի 87.6%-ը:

ԿԳՄՍ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի գծով ծախսերը 2025թ. ինն ամիսներին

թերակատարվել են 33.6%-ով կամ 27.8 մլրդ դրամով: Հայտնի է, որ ընդամենը 59 դպրոցներում են ավարտվել աշխատանքները: Այս փաստն ավելի հիմնավոր է դարձնում 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման թիրախի մինչև ներկայիս կառավարության գործունեության ավարտը մնացած մի քանի ամիսների ընթացքում անիրատեսականության վերաբերյալ մտահոգությունները:

Մի շարք այլ կարևորագույն ծրագրերի գծով ևս արձանագրվել են էական թերակատարումներ: Մասնավորապես, «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում» ծրագրի գծով թերակատարումը 95.6% է, «Զբոսաշրջության զարգացում» ծրագրի գծով՝ 83.4%, «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագրի գծով՝ 79.4%, «Ներդրումների և արտահանման խթանում» ծրագրի գծով՝ 64.3%, «Քաղաքային զարգացում» ծրագրի գծով՝ 62.4%, «Գյուղատնտեսության խթանում» ծրագրի գծով՝ 35.7%: **Զգալիորեն՝ շուրջ 37%-ով թերակատարվել է անգամ «Ճանապարհային ցանցի բարելավում» ծրագիրը՝ հիմնականում պայմանավորված պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագրի կատարողականով:**

ՀՀ պետական բյուջեի ծախսերի շրջանակում արձանագրված շոշափելի թերակատարումները շարունակում են վկայել պետական կառավարման ցածր արդյունավետության մասին:

2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,433.5 մլրդ դրամ կամ 14,195.9 մլն ԱՄՆ դոլար՝ 2024թ. տարեվերջի համեմատությամբ դրամային արտահայտությամբ աճելով 340.8 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 1,353.6 մլն ԱՄՆ դոլարով:

Պետական պարտքը ներկայիս կառավարող քաղաքական ուժի իշխանավարման ընթացքում ավելի քան կրկնակի աճել է և շարունակում է ավելանալ: Այսպես, դոլարային արտահայտությամբ պետական պարտքի ցուցանիշը 30.09.2025թ. դրությամբ շուրջ 2.1 անգամ գերազանցում է 30.04.2018թ. դրությամբ ցուցանիշին: Արձանագրված փաստը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: